


Ամբաս Բիրաս
Խմբագրութիւն «Փիւնիկ», Ֆ
Ալեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Չր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 8
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բայլ. 6

ՓԻՒՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 31

ՊԱՅՔԱՐԸ



«Փիւնիկ» ի Բ. Տարեցանին առաջին կիսամեակն երբ կը բոլորի, կ'ուզէինք յետադարձ աղանակով մը մեր Պատ. ընթերցողներուն — մանաւանդ Եգիպտահայ հասարակութեան — պարզել այս կարեւոր երջանին մէջ ծեծուած ազգային խնդիրներէն կարեւորագոյնը — Սահմանադրութեան բռնաբարումը — որ ծնունդ տուաւ ժողովուրդին ուշիմ ու գիտակից մասին ազգային արժանութեան ու ազատական մամուլին ընդվզման: Փիւնիկ Ա. թիւէն ձեռք առաւ խնդիրը, ըմբռնելով անոր բոլոր բարձրութիւնն ու կենսական նշանակութիւնը. սկսաւ մղել պայքարը, որ անխուսափելի էր ու անհրաժեշտ, սրուած ըլլալով Եգիպտոսի ծերունազարդ Առաջնորդին թոյլ, երկդիմի ու անհեռաշէն ընթացքը, Տեղիս Առժ. Թագ. Խորհուրդին ա'լ անհանելի դարձած պատժովարութիւնը, Ազգ. Երկ. Վարժարանին ողբալի կացութիւնը, որուն

ենթարկուած է սարիէ մ'ի վեր, ազգային գործերուն աննախանձելի դրոթիւնը, եւ ի լրումն աղէտի, յիշեալ Խորհուրդին գրագրին աննարակ ու պայքար փաստաբանութիւնները, այդ հակասահմանադրական Խորհուրդին գոյութիւնը մինչեւ 4 սարի երկարել տալու անօրալի նիգերով:

Մամուլը պարտ մ'ունէր. պատժ պանել կոխոսուած օրէնքը, բռնաբարուած իրաւունքները, դատափետել յետադիմական գաղափարները, ձաղկել կեղծիքը, մերկել դատերը. այս բոլորը՝ ժողովուրդին գերիշխանութիւնն ու օրէնքին սիրապետութիւնն ապահովել տալու համար.

Այս էջերուն մէջ յաջորդաբար երեցան.

- Ի՞նչ կ'սպասենք Առաջնորդէն.
- Ի՞նչ կուզէ Առաջնորդը.
- Հանրագրութիւնը,
- Անախցելի խթանը,
- «Սահմանադրութիւնը» Ալեքսանդրիոյ մէջ» Յարեւածը.
- Ժողովուրդը չ'ը խաբուիր,
- Հրապարակային ստիստութիւն,
- Աղէք. Ազգ. վարժարանին զաղտնիքը,

Անպատկառ ինասականութեան Դյուխ
 գործոց,
 Սեպտեմբեր 1ի գալստիկութիւնը,
 Վերջին փաստը,
 Շնահան սուս մ'ալ,
 Խաչի ճառը,
 Հակահանրագրին առթիւ,
 Յանդուածին առթիւ,
 Հարցը, եւն, եւն:

Միւս կողմէ, Եգիպտական Մամու-
 լին արասը — բերան Տեղիս Ա.Ո.Ժ. Թաղ.
 Խորհուրդին — Արշալոյս՝ ինքզինք ծա-
 խեց այդ Խորհուրդի գրագրին, որ անոր
 լայնածաւալ պարապը սկսաւ լեցնել
 թղթակից, Քանթեզի, եւն ծածկանուննե-
 ռու դիմակին սակ, կարգ մ'անկապ, ու-
 ռուցիկ ու փուն յօդուածներով, որոնք
 միամիտ ու խեղճ ամբոխ մը մուրեցնե-
 լաւ ծառայելէ ետք, դասապարտուած
 էին ջախջախուելու քննադատութեան
 մուրհին անողոք հարուածներուն սակ :
 Ի վերջոյ, իր քանդուած գործին անբա-
 կին հանդէպ շուարած կեցած՝ ալ հրա-
 ժարելով փաստաբանութենէ, փախաւ
 հրապարակէն, մութին մէջ թաղելու
 համար. հոն սկսաւ գործելու ամենա-
 վաս եղանակ մը. այս կամ այն բարե-
 միտ կիկոն գործիք ըրած, խեղճ արհես-
 տաւորներու կրպակներն ափ առաւ, ոտ-
 քով, երբեմն ալ կառնով ման եկաւ փո-
 դոցներէն, մուրալու համար ստորագրու-
 րիւններ, որոնց տէրերէն շատերը դեռ չեն
 գիտեր թէ ի՞նչ ստորագրած էին, եւ որոնք
 գոնէ այսուհետեւ պէտք է ուշաբերին
 իրենց յանցանքը քաւելու համար, ըն-
 ռութեանց ժամանակ ջանալով գերծ
 մնալու ինչու ու վնասակար ազդեցու-
 րիւններէ:

Այս ամենը կը կատարուէր մեր
 երանելի եպիսկոպոսին թիւն սակ, ընդ
 հովանեաւ, հսկողութեամբ ու նիւթա-
 կան զոհողութեամբ Ա.Ո.Ժ. Թաղ. Խոր-
 հուրդին, որ գիտէ, երբ կամի, պատշա-
 նել իսկ անպատշաճութիւն... : Ու վե-
 րադարձաւ Վսեմ. Պօղոս բաւա Նու-
 պար, Եգիպտահայ հասարակութենէն

հաւասարապէս սիրուած ու յարգուած
 անձնաւորութիւնը, որ, — հպարտ եւն խոս-
 տովանելու — առաջին քայլին՝ ապա-
 ցոյցը տուաւ իր հաշտարար ու անկողմ-
 նակալ ոգիին, մագ մը չ'եղելով ուղղա-
 միտութենէն, եւ առաջին օրինակը սա-
 լով օրէնքին առջեւ խոնարհելու :

Թաղ. Խորհուրդին առժ. հանգա-
 մանքն ու հակահանրագրական կազ-
 մութիւնը յայտարարողներէն առաջինն
 եղաւ Վսեմ. Նուպար Որդին, հաստատե-
 լով այսպէս «Փիւնիկ»ի մղած պայքա-
 րին օրինաւորութիւնը, հոգ չէ՛ թէ այդ
 յայտարարութիւնը մեր քանի մը թա-
 ղակաւններուն ջիղերը ցնցէ ու զիրենք
 Նորին Վսեմութեան դէմ իսկ ընդվզե-
 լու առաջնորդէ:

Վեց ամիս է անընդհատէն կը
 մղուի այս պայքարը, որ կը պատկուի
 օրէնքին ու իրաւունքին սարած յաղթա-
 նակովը:


Մամուլը կատարեց ուրեմն իր
 պարտքը, ժողովուրդը լուսաւորելով. կը
 մնայ հիմայ ժողովուրդին՝ շարունակել
 մամուլին սկսածը, հասնելու համար իր
 նպատակին, որ պէտք է կեդրոնական առ-
 այծմ միակ կէտի մը վրայ. ՌԻՆՆՆԱԼ
 Թաղ. Խորհուրդ մը, որուն անդամներն
 ըլլան Հայ՝ լեզուով, զգացումով ու
 գաղափարով. բաղձանք մը զոր միտ
 գգուած է Վսեմ. Նուպար Որդին:

Մեր ազգային կենսական շահերը
 կը պահանջեն որ մեր ժողովականները
 կիրքով չը գործեն. կիրք զիրենք — այն
 ալ ամենագնում պատրուակներու սակ
 — կրնայ միջեւ դասարանին կամար-
 ներուն սակ քանիլ. իրենց հետ ազգա-
 յին արժանապատիւրիւնն ալ հասա-
 րակաց ծանակ ու առակ կը դառնայ :
 Երբ ընտրութեանց ժամանակը գայ, Փիւ-
 նիկը չը պիտի բերանայ իր պարտա-
 նաչութեանմէջ: Առ այժմ, կ'զգուեա-
 ցընենք միայն մեր հասարակութիւնը,
 չ'ըլլալ զոն սաղաւններու եւ գործիք՝
 շահամու ու բաղդախնդիր խաբէրա-
 ներու :

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Տ Ի Գ Ր Ա Ն Ե Ր Կ Ա Թ Ի

(Կարապետ Պիլեգիսի ձեռագրով)



Գ

Կարապետ յ'Ամերիկա. Վերադարձ եւ
քննադատութիւն ՚ի Բարիգ. Գրական
նախափորձեր:

(Շար. ԻԸ. քիւէն)

Երբ 1888ին, դպրութեանց պա-
կաւոր, աւարտեց իր դպրոցական շր-
ջանը, չ'ուզեց վերադառնալ իր ծննդ-
դավայրը Կ. Պոլիս, ուր դիրքն էր ի-
րեն համար գոնէ նիւթապէս նախան-
ձելի դիրք մը շինել, կառավարական
պաշտօնով մը Բ. Դուռը: Սակայն, ինք
սարբեր ապարէզ մ'ընտրած էր ու կը
զգուէր ուրիշ փափագ մը, որ սակաւ
կը բանէր իր պատանեկան ոսկեգօծ
երեսակայութեան մէջ, եւ որուն ան-
հրաժեշտ էր իրականացումը: Անգուսպ
եռանդ մ'ունէր ճամբորդելու, հեռաւոր
ու անծանօթ երկիրներ տեսնելու, ու-
սումնասիրելու: Ուստի նոյն տարին աւ-
նան մեկնեցաւ Բարիգէ, երթալու հա-
մար Ամերիկա. երբ դեռ 18 տար-
ուան էր: Ճամբորդութեան մէջ իր ան-
բաժան ընկերն էր իր կրտսեր եղբայրը
Մարտիրոս, որուն կը հաղորդէր իր զը-
պաւորութիւնները:

Այսպէս, այցելեց Յար Ռեւոլյուսիոն ու
Միացեալ Նահանգներուն կարեւոր քա-
ղաքները. տարի մը մնաց հոն: Յանախ
կ'առանձնանար Նոր Աւիստիկոս կոյս
անտառներուն խորհրդաւոր խորքերը, տես-
նել նիւթաարտադրան վեհափառ վէժին
ու լսել անոր հոգեւարտու մտնու-
նէրը: Մօտէն դիտեց հին ու նոր ձեւերը
մեր մոլորակի կեդեմի վրայ խլրտող
մարդկութեան, տեսաւ կոշտ ու սաւ-
ուածը, վայրենին ու քաղաքակրթու-

ծը. անգամ մը տեսաւ իր գետնին,
բրբեց ու բրբեց, հետապնդումով մը
տեսեց մանաւանդ ամերիկեան գրական
շարժումը: Ու այսպէս, իր մէկ տար-
ուան քննադատութիւնը Միացեալ Նա-
հանգներուն մէջ՝ գործնական դպրոց
մ'եղաւ անգլիերէնին համար, զոր կը
սիրէր արդէն, ու որուն առանձինն ա-
ռաջ տարած էր ուսումը դպրոցական
տրջանի զբօսանքի ու պարապուրդի
միջոցներուն: Տեղն է հոս յիշելու թէ՛
Տիգրան Երկաթ ընտիր անգլիերէն ալ
կը գրէր եւ կ'երեւէր Լոնտոնի քանի
մը կարեւոր թերթերուն մէջ:

Մէկ տարի ետք, վերադարձաւ Յը-
րանուս, ուր քիչ յետոյ, Բարիգեան դրա-
մասան մը մէջ համեստ պաշտօն մը
տաւաւ, պարապոյ ժամերը նուիրելով
գրականութեան: Սակայն, միշտ դժգոհ,
իր ներսը խլրտող ու եռացող արդէն, ա-
ւելի՛ր՝ զարգանալու ու գործելու կիրքէն
հալածուած, հսկայ նիւթ կը թափէր
վերածուելու, կատարելագործելու
իր ուսումները, որոնց միջեւ իր վեր-
ջին շունչը չէր դադարէր ողբալէ աւ-
լուրիսն ու անբաւանականութիւնը:
Գրական ապարէզ, ահա՛ իր երազը,
զինքն հալածող դերը. հոն կը կառչէր
իր կոչումը. հոն կը յագեցար իր քաղ-
ցը, լաւին, գեղեցկին, հոգեւորին ու
վստմին պապակը. կեանքին կռիւր, ա-
հա՛ իր մտախառնը. կռիւ, ո՛չ թէ
փանափ գոյութեան մը բեկորները
պահելու համար, այլ մաքառումը՝
սիրող ընկերական կեդեմի կարգին
դէմ, դարե՛րով նուիրագործուած սու-
տերուն ու փութերուն դէմ. էն մը, վը-
րէժիւնդիր յարձակում մը՝ մարդ էակին
անկումը նիւթող ամեն կարգի դաւե-
րուն ու հաւաստներուն դէմ: Ու այս
գերագոյն պայմարը մղելու համար
արժանապէս ու ապահովելու համար
անոր յաղթանակը, պաշարի պէտքը
կզգար ու զէնքի, նոր ու հզօր զէնքե-
րու: Ուստի, կ'ամփոփուի, կը բազմա-

Ք Ր Ո Ն Ի Կ

— Տ. ԼՈՒՏՈՎԻԳ ՏԸ ԳՈՆԴԱՆՍՈՆ, հռչակաւոր հայասէր հեղինակը Բրիտանիայի ու Միւսիւլմանի բանակաւ երկին, վերջերս *L'Arménie* խորագրութեամբ ղրկած է նամակ մը, որմէ կը փաղեմ հետեւեալ կարեւոր հասուածները.

“Կրտսէլ թե՛ այս երկու դեպքերը — Հայ ուսանողաց Միութեան կողմէն Հայաստանին ու Հայկ. Հարցին վրայ հրասարակելի նշանաւոր երկասիրութիւնն ու Տիար Ա. Մանթաշօփի ծախումը Բարից կառուցանելի Հայկական եկեղեցին — կարեւոր ճամբայ մը կը բանան հայկական հարցին պատուութեանը մէջ: Այս հարցը, յակարծ յոյս բերուած, ներկայ ժամանակաց ամենասուսկալի ջարդերէն մեկուն վաղորդայնը, մինչեւ ցարդ սարսափօրէն գրգռած էր շուրջ անխելք համակրանքը հանրութեան մը, որ բողոքովին զոհ էր հայ ազգայնութեան, թե՛ ՚ի Յրանսա եւ թե՛ ուրիշ երկիրներ: Երբ Հայերու վրայ կը խօսուէր Եւրոպացիի մը, քանի մը սարի առաջ, առ հասարակ այս պատասխանը կ'ընդունուէր. “Հայերը, կը ճանչնան զանոնք, այս ա՛յն վաճառականն ու սեղանաւոր ժողովուրդն է որ զեզ կը շահագործէ երբ Արեւելք ճամբորդես:” Այնուհետեւ ջարդերը վրայ եկան ու դեռ իրենց բողոք անուշիւրութեամբը չը ճանչցուած, առհասարակ կը շուռնէին սակաւին հետեւեալ խօսքերը. “Հայերը՝ վարձուածներ են Անգլիացիներէն, խանգարելու համար քարտուէրն Արեւելքի մէջ ու այս վերջիններուն ձեռք բերել սալու նորնոր շահեր:” Ուրիշ կարծիքներ ալ ունեին ու սակաւին ունին իրենց ընթացքը. “Հայերը, դաշնակից յեղափոխականներ են, եթէ ո՛չ անիշխանականաց, զոնէ բողոք երկիրներուն ծայրակեղ կուսակցութեանց:”

“Հայկ. հարցը սակաւ կը դասաւորուի Արեւելքի ամենածանր հարցերէն մեկուն մէջ, եթէ չէ արդէն ամենէն ծանրը, ու անհրաժեշտօրէն ձեռք պիտի առնուի այն՝ երբ դիւանագիտութիւնը կամ դեպքերը, դիւանագիտութեան անշիւր ուժով, կատարած պիտի ըլլան իրենց գործը. զի հիմա կը հետեւի պատմական ու ընկերաբանական ու-

սումնասիրութիւններէ թե՛ հայ ժողովուրդը հնագոյններէն մին է աշխարհին, թե՛ շնորհիւ իր ինագականութեան, չարփառութեան, իր խորապէս կրօնասէր ոգիին ու իր փաղափայլն ու զինուորական առաջնութեանց, պահած է իր ազգայնութիւնը հազարաւոր տարիներ, հակառակ յեղափոխութեանց ու յեղաշրջումներուն որոնց քատել եղած է Արեւելք: Ակներու կը տեսնուի թէ ինք դեռ ունի միջինաւոր ազգայիններ յասուի հանձարով ու շեղումով: Ուրեւն ո՛չ միայն գիտական երկ մը պիտի ըլլայ գրուոր յիշակէրս մը կանգնել Հայաստանի ազգայնութեան, կրօնին, երկրին, գրականութեան, շեղումին, հայրենասէրներուն ու զինուորական հերոսներուն. սաի պիտի ըլլայ օգտակար ու պիտանի երկ մը, ցոյց տալու համար Հայերն ու Հայկ. հարցն իրենց իսկական յոյսին սակ:

Վերջապէս. Բարիցի մեր գեղեցկագոյնը բաղդերէն մեկուն մէջ եկեղեցի մը շինելու մէջ բան մը կայ խորապէս հրահանգիչ: Ժամագրութեան բնական վայր մը սեղծել աստուծոյց համար. զգալի փառք մը տալ արիւն ու հոգիին այս ազգութեան, որ անուշի չարչարաններէն դուրս ելնելուն, դեռ կրնայ ինքզինքն փնտել. ցոյց տալ թե՛ Գօերներուն պէս կը հաւատայ Աստուծոյ արդարութեանը, երբ մարդկանցը կը պակսի. սաի աւելի յարգանք մը կը ներշնչէ քան թէ ունայն աստեարակութիւնները: Ժամանակով Տրովադացիք իրենց հետ տարի իրենց աստուածները, ու այսպէս կ'ընենք վաղեմի ժողովուրդներն երբ կը վարձուէին իրենց վառարաններէն:

“Թո՛ղ ուրեւն Հայերը մեր մէջ բերեն իրենց Աստուածը. թո՛ղ զանի պատասխանն հոյակապ տաճարի մը սակ ու անոնք իրենք զիրենք մեզի պիտի ցուցնեն ճիշդ ինչպէս որ են, այսինքն Աստուծաշնչի ժողովուրդին պէս որ չ'ուրանար իր ծագումը: Վաղուց Հայերը պիտի անհետացած ըլլային եթէ անեղծ պահած չ'ըլլային իրենց կրօնքը, ծեսերն ու իրենց հաւատքը, որոնք, հանդէպ Թուրքիին՝ եղած են իրենց ազգայնութեան պալլասիոնը, իրենց միակ գոյութեան իրաւունքը դարեւ ՚ի վեր:

Անոնց համար ինչուր ապագայ մը պիտի գործակէի, կամ թէ քիչ աստեղն անոնց իսպառ անհետացումը պիտի կանխատեսուի, եթէ իրենք թոյլ տային որ ապակներ այս վաղեմի աւանդը:”

“Դուք, Հայե՛ր, որոնց վերածնունդը դեռ երեկուսակ է, նախապես հոգի ու մարմին կուսաք հայ ազգութեան, եւ արդարեւ ասկե՛ սկսե՛լ պիտի լինի: Յետոյ, երբ ձեր բարեկամներն ուժեղ են, — բայց, աւա՛ղ, այս միակ պայմանով, զի յարթեալ հաւար դժբաղդաբար, դիւանագիտական հաւար յանախ պիտի լինի եւ երեւին ունենայ աղէկ բանակներու փաստը — բարդը պիտի ունենայ շունչը ապագային գոնիրենք ուն ձեռք, եւ այն ասե՛ն, հայ հայրենասերները պիտի հաստատեն թե՛ զո՛ւր չ՛են աշխատած:”

— **ԲՕԼ ՏԸ ԳՍ.ՍՍ.ՆԵՍ.Գ** *Autorité*
 թերթին 2 Նոյեմբերի թումով կը գրէ.
 “Միշտ խորհած եմք թե՛ Թուրքերուն ներկայութիւնն յերոպա՛ արեւոք մ՛ի երոպայի հաւար, թե՛ վաղուց արդէն պիտի եր դատերնին սալ այս վայրենի հրոսներուն եւ գանձնք նեկտր ասիական հողին վրայ, որ զիրենք գգայում է:”

Բրիտանեայ երոպան կարեւորեղ՛ն էր տեսնելով որ սուս մարգարէի մ՛այս աղանդաւորները դեռ կը պղծեն Ս. Սոփիոյ Կաթողիկէն, ուր ասե՛նով բուրք ձիերը գորին կերան խորանին վրայ:

Պիտի արգիլե՛նք մարդասպան Սուրբանին զօրեւուն ուխտէն թափել արիւնը Հայաստանի հողին վրայ, որ ա՛յն աստիճան խեղճ ու ծծած է որ ալ կարմիր ցեխ մը դարձած է:

Կ՛երթա՛նք հոն ազատեալ հաւար ժողովուրդ մը, վրեժը լուծելու 200 հազար ֆրիսունեաներուն՝ ա՛յնքան վստօրէն մտրուած:

Երբ այսքան ազնիւ շարժառիթ մը հաւար էր, մենք չ՛ենք որ առաջասկիս ետ դարձնել փորձիկնք:

Ընդհանրապէ՛ս:”

— **ՍՊՍ.Ռ.Ս.ՋԻՆՈՒԹԻԻՆՆԵՐԸ.** — Վիեննայէ հեռագիրներ կը ծանուցանեն թե՛ Աւստրիոյ Կայսրը մտադիր է բանակին վրայ անելցնել 100 վաւեր ալ, որոնց ամեն մէկը 1000 զօրէ կը բաղկանայ: Հօր շարժառիթներ պէտք են որպէս զի Աւստրիան այս սոսկալի սնտեսական սագնապին մէջ խորհի ուժերու այսքան խոտոր յաւելում մ՛ընելու:

— **ԱՆԳԼՈ — ՊՕԷՐԱԿԱՆ** ամօրալի

պատերազմին վերջ մը դնել սալու գաղափարը Զուիցերիոյ մէջ հետզհետէ կ՛ընդհանրանայ: Նախագային բոլոր կառավարութիւններն ալ համամիտ են այս շարժման: **Շօ-սը-Փօն** [Նեօժշարէլ] ի Ընդհանուր ժողովն ընդունած է առաջարկը **Տ. Ուոլֆրը Պրիօրի** որ կը խնդրէ դաւենակցական ժողովէն օտար տէրութեանց հարկաւոր դիմումներն ընել անգլիական կառավարութիւնը բերելու համար հաւատարման:

— **ԳԵՐՄԱՆՈ — ՎԵՆԷԶՈՒԷԼԱԿԱՆ** ՎԷՃԸ. — **Բօր-դօժ-Սրեկէ** հեռագիր մը կը ծանուցանէ թե՛ **Գարագաւեն** եկող համբողջները յայտարարած են որ Վեներաձուէլայի ժովեգրեմներն պաշտօնուն անդադար պիտի սկսէր: Երեք գերման նաւեր խարսխած են արդէն Մարագայոթի բով, ուրիշ հինգ նաւեր ալ կ՛սպասուին Գերմանիայէն: Բոլոր այս մարտանաւերն երբ հասնին, պիտի պաշարեն Վենեձուէլայի գլխաւոր նաւահանգիստները:

Պաշարումը պիտի տեսնէ ցորչափ **Գաստրօ** հախազահին կառավարութիւնը գոհացում չը սայ գերմանական պահանջումներուն:

— **ԱՆԻՇԵՍԱՆՍԱԿԱՆՍՏ ԴԷՄ.** — Ռուսիայէն ժընէվ գացած են լրտես ուսիկաններ, մանրակրկիտ կերպով քննելու համար վերջերս Ռուսիոյ մէջ տեսնուած անիթիանական շարժման մը ծագումը. շարժում որ կը սարածուի Բոլոնիոյ բոլոր գործաւորներուն մէջ: Ռուսական կառավարութիւնը կը կարծէ թէ **Ազատութեան Հնչակը** տիրոջ ազատաւունջ թերթը, որ Բոլոնիա բախում է, ժընէվ կը հրատարակուի, ուսկից Լօծի գովիթներուն կը դրկուի ծածուկ:

Արդէն ծամանակէ մ՛ի վեր ժընէվի ուսիկանութիւնը դիտած էր անսովոր շարժում մը հոն հաստատուած շատ մը օտար փախսականներու մէջ: Այսպէս է որ Սպանիոյ մէջ վերջերս ծագած

Եկեղեցիի հրդեհները պատասխանած են ժընէվ միջազգայնապատեհներու խումբէ մը, որոնց պէտքն ուսանողներ են կ'ըսուի:

— **ՌՌԻՍՕ - ՃԱԲՈՆԱ. ԿԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ՄԸ.** — Ս. Բեքրապուրկէ հասած լուրեր ենթադրել կուտան թէ՛ Ռուսիոյ ու Ճաբոնի միջեւ համաձայնութիւն մ'անխուսափելի է: Ճաբոնի կ'ընդունի եղեր ու եւ է ընդդիմութիւն չ'ընել Մանչուրիոյ ռուսական գրաման, ի փոխարէն Գորէայի մէջ Բանի մը կարելու առանձնաճանաչումներու: Իրօ Մարիին, մեկնելէ առաջ իր կառավարութենէն ստացած է եղեր այս հիմներու վրայ Ռուսիոյ հետ ստորագրութիւն փոխանակելու արտօնութիւնը:

— **ՍԹԱՄՊՈՒԼՕՏԻ** սպաննիչը, Միշէ Սըրայիէժ, Հալի ըսուած, ձերբակալուած է ամսոյս 7 ին:

— **ԱՓՐԻԿԵԱՆ ՏՐԻՊՈԼՍՈՅ** մօտ բնակչութեան ու թուրք զօրքերուն միջեւ դեկտ. 8ին ծագած կռուին մէջ սպաննուած են 6 արաբներ ու 2 զօրքեր: Քաղաքը պաշարման վիճակի մէջ է:

— **ՀԱՅԵՐ ՌԻ ԹՈՒՐԿԵՐ.** — Դեկտեմբեր 9 թուով հեռագրով Մուշէն հասած պատեհական լուրերուն համեմատ, Մուշի հայկական հրոսախումբը որ վերջերս գրուած ու յետոյ թողած էր Երզնկայի վանք մը, հո՛ն է վերադարձեր ու դարձեալ պաշարուեր թուրք զօրքերէն: Զօրք մ'սպաննուած է եւ ուրիշ մը վիրաւորուած:

Դուռը խնդրած է միջամտութիւնը Հայոց Պատրիարքին որ կուտայ իր աջակցութիւնը տեղական իշխանութեանց, ջանալով հանդերձ որ վանքը խնայուի, զի որքանոց մը կը պարուանկէ:

— **ՔՈՒՐՏԻՍԹԱՆԻ** կացութիւնը վրդովեցրնող կը դառնայ օրէ օր, դեկտ. 7ին Լոնտայէ կը հեռագրուի. բոլոր պատեհական հեռագրները կ'ապահովեն թէ Քուրտ յեղափոխականները կ'ապաստանեն Փոքր-Ասիոյ բոլոր նա-

հանգները: Իշխանութիւններն անկարող են կարգը պահպանելու: Բացարձակապէս հարկաւոր է դիմել ուրիշ ուժի մը միջամտութեան ու կը հաւաստուի թէ այս խնդրին համար Ռուսիոյ ու Անգլիոյ միջեւ հայեացներու փոխանակութիւն եղած է:

— **ՎՍԵՄ. ԱՐՐԱՀԱՄ ԳԷՅ ԲԱՐԹՈՂԱՅՈՐ Ս. ԹԱՂԷՈՍ** եւ **ԲԱՐԹՈՂԻՄԱՆ ԱՆԱՖԵԼՈՅ ՏՕՆԻՆ** առթիւ հրատարած է Հայր Բարթողիմէոս Վ. Թագանեանը, ընկերակցութեամբ Տ. Յար. Բահանայ Յակոբեանի եւ զպիւրներու, հանդիսաւոր պատարագ մատուցանել ի յիշատակ Վսեմ. հոգելոյս Հօր եւ գերդաստանի հանգուցեալ պարագայից, Ապուհօմուս գիւղի ագարակին Մատուին մէջ, գործարին Վսեմութեան հոգելոյս Հայրը կառուցանել տուած է յանուն մեր Ա. Լուսաւորչաց Ս. Թաղէոս եւ Բարթողիմէոս Անափելոց:

— **ՍՏԵՓՍԱՆ ԲԱՇՍԱՍԼԱՆԵՍՆԱԿԳ.** Սահմանա ռութեան հայրերէն մին, որ իր վարչական սաղանդովը գիտաւսելի ծառայութիւններ մատուցած է ազգին, անցեալ շաբթու կը վախճանի 79 տարեկան:


ԿԸ ԾԱՆՈՒՑՈՒԻ

Փիւնիկի արգոյ բաժանորդներուն որ այսուհետեւ, վճարումներու դիւրութեան ու կանոնաւորութեան համար, հետեւեցոյ տրոպական թերթերու օրհնակին, Գանձումները պիտի կատարուին թղթատարական վարչութեան ձեռքով:

Կը յուսանք թէ այս կարգադրութիւնը գոհ պիտի թողու երկու կողմնալ, ազատելով խմբագրութիւնը գործակալներէ, իսկ արգոյ բաժանորդներն ալ բաժնեգիրը Մանսարոսով ղրկելու դժուարութենէն—

— *Կարդալ յաջորդ թիւին մեջ Դահիրէէն Խաջօ-Չանի թղթակցութիւնը.*

«ԳԵՂՈՒՆԻ»



«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ :

Տարեկան Բաժնեգիրն է 3 Ֆրանկ :
1 րբ. 50 կոպէկ :


Թերթէս գոյացած մաքուր հասոյթին կէտը առանց կրօնի խտրութեան, կը յատկացնեն *Ազգիս Որքիկներուն* :

Ապառիկ բաժանորդագրութիւն բացարձակապէս չընդունուիր. Գինը կանխիկ է :

Բաժնեգիրն, նամակ, եւ այլն, *Ողբակի* հետեւեալ հասցէին յղելու է

III «PAZMAVEB»

ST. LAZARE VENISE (ITALIE)



ԴԵՂԱՐԱՆ


ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Առջն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ ընտիր դեղորայք, սքեսիալիթիներ եւ հանքային թարմ ջուրեր :

Յաճախորդները կրնան ապահով ՅԱԼԱԼ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին :

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ :



SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիւնը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՏԱՆԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մեհշիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ